ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ (ՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ) ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵԹԵՐ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՌԱԴԻՈՅՈՎ ԵԹԵՐ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/5

ք.Երևան « 5 » մարտ 2019թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն՝ ի լիազոր անձ Կարեն Մաթոսյանի, ով գործում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման գործընթացի վերաբերյալ հաղորդումների (հոլովակների) պատրաստման և հեռուստատեսությամբ եթեր հեռարձակման, հայտարարությունների պատրաստման և ռադիոյով եթեր հեռարձակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8 360 000 (ութ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _4_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	Եղվարդի խճ. 1, Երևան, 0054, ՀՀ
ՀՎՀՀ՝ 02629081	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011017051	Հ/Հ 11500805598600
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00067992
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի	Լիազոր անձ՝
պաշտոնակատար՝	
_____ Կ. Հարությունյան	_____ Կ. Մաթոսյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 5 » մարտ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	64235180/1	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի վերաբերյալ հաղորդումները պետք է հեռարձակվեն ՀՀ տարածքի առնվազն 90%-ում (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն), հայկական հեռուստաալիքով, որը կապահովի նվազագույնը 24 ժամվա ընթացքում միջինում 10% սփռում և 2% վարկանիշ, ինչպես նաև կապահովի հեռարձակման բարձր որակ և անխափան հեռարձակում: Հաղորդման տևողությունը պետք է լինի միջինը 7-8 րոպե: 2019թ. ընթացքում պետք է պատրաստվի և եթեր հեռարձակվի 11 հաղորդում: Հաղորդման անվանումը պետք է լինի «ՀՀ պետական պարտքը և պետական բյուջեի ցուցանիշները», որը պետք է գրվի եթերային ծրագրերում: Հաղորդման համար պետք է պատրաստվի շապիկ՝ հաղորդման սկիզբը և ավարտն ազդարարելու համար: Յուրաքանչյուր հաղորդման եթեր հեռարձակելուց առնվազն մեկ շաբաթ առաջ Պատվիրատուի	դրամ	4 070 000	1	ՀՀ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. դեկտեմբերի 20-ը, նկատի ունենալով, որ ծառայությունների մատուցման առաջին պատվերի տրամադրման և ծառայության մատուցման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակասել լինել 31 աշխատանքային օրից, եթե Կատարողը չի համաձայնում ծառայության մատուցումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների ծառայությունների մատուցումը իրականացվում են ըստ ծառայությունների տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցի:

		կողմից հաղորդումները պատրաստողին կտրամադրվի հաղորդման տեքստը, ինչպես նաև կներկայացվի հաղորդման հիմնական գաղափարը: Հաղորդումը պետք է բաղկացած լինի երկու մասից: Առաջին մասում, որի տևողությունը պետք է լինի մոտավորապես 5-6 րոպե, կցուցադրվի կատարված նկարահանումները, որի հետ մեկտեղ (նաև առանց նկարահանումների ցուցադրման) հաղորդավարը պետք է տաղավարից առանց կարդալու (անգիր) ներկայացնի Պատվիրատուի կողմից տվյալ հաղորդման համար տրամադրած տեքստը: Հաղորդման երկրորդ մասում, որի տևողությունը պետք է լինի մոտ 2 րոպե, ներկայացվելու է հաշվետվություն, որի ընթացքում Պատվիրատուի կողմից տվյալ հաղորդման համար տրամադրված տեքստը մաս-մաս պետք է երևա էկրանի վրա՝ համակարգչային գրաֆիկայի կիրառման միջոցով, որը միաժամանակ պետք է կարդա նաև հաղորդավարը: Տեքստի հետ միաժամանակ համակարգչային գրաֆիկայի կիրառմամբ պետք է կազմվեն եռաչափ (3D) գրաֆիկներ, որտեղ հերթականությամբ կպատկերվեն այն թվերն ու ցուցանիշները, որոնք կկարդացվեն հաղորդավարի կողմից: Ամեն մի խումբ թվային բազմությունների համար պետք է կազմվեն առանձին գրաֆիկներ, որոնք կարող են լինել տարբեր տեսքի: Հաղորդումները					

		պետք է պատրաստվեն այնպես, որպեսզի եթեր հեռարձակվելուց առնվազն մեկ օր առաջ կատարողի կողմից ցուցադրվեն Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչներին՝ հաղորդման հեռարձակման համար հավանություն ստանալու նպատակով: Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչների կողմից արված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները հաղորդումների վերաբերյալ ենթակա են կատարման կատարողի կողմից: Հաղորդումները պետք է հեռարձակվեն ժամը 19:00-ից 23:00-ը ընկած ժամանակահատվածում, և հնարավորության սահմաններում հաղորդումները պետք է հեռարձակվեն նույն ժամին: Նկարահանումները հիմնականում կկատարվեն Պատվիրատուի վարչական շենքերի և ստորաբաժանումների շենքերի տարածքներում, կնկարահանվեն նաև հարցազրույցներ: Հաղորդավարը պետք է լինի 20-ից մինչև 45 տարեկան բարետես արտաքինով անձնավորություն, որը հաղորդման մեջ երևալիս պետք է հագնված լինի կոկիկ և ունենա գործարար տեսք: Հաղորդումը վարելիս հաղորդավարը պետք է տեքստը ներկայացնի առանց կարդալու (անգիր)՝ նայելով տեսախցիկին:					

		Հաղորդումը պատրաստելիս պետք է օգտագործվի բարձր կարգի (պրոֆեսիոնալ) տեխնիկա՝ տեսախցիկ և մոնտաժային սարքեր: Տեքստերը, հեռախոսահամարները, հասցեները և նկարները հեռուստաէկրանին սահուն կերպով ցուցադրելու համար պետք է կիրառվի համակարգչային գրաֆիկա: Կարևորագույն պահանջ է գործարար տեսք ունեցող տաղավարի առկայությունը: Հաղորդումները պետք է եթեր հեռարձակվեն հայերեն լեզվով:					
2	92211100/1	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի վերաբերյալ հայտարարությունները պետք է հեռարձակվեն երկու ռադիոհաճախականություններով, որոնցից առնվազն մեկի սփռման տարածքը պետք է ընդգրկի ՀՀ տարածքի 90 և ավել տոկոսը (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն), իսկ մյուսի սփռման տարածքը պետք է ընդգրկի նվազագույնը Երևան քաղաքը և նրա շրջակայքը (սփռման տարածքը՝ ք. Երևան): 2019թ. ընթացքում պետք է պատրաստվի և եթեր հեռարձակվի 1100 րոպե ընդհանուր տևողությամբ հայտարարություններ (պատրաստված յուրաքանչյուր նոր հայտարարություն եթեր կհեռարձակվի միջինը երկու անգամ): Կատարողը պետք է ապահովի տեղեկատվության հեռարձակման բարձր որակ և անխափան հեռարձակում: Հայտարարության տեքստերը Պատվիրատուի կողմից Կատարողին կտրամադրվեն հիմնականում հեռարձակումից առնվազն երկու օր առաջ: Հայտարարությունը տրամադրման	դրամ	4 290 000	1	ՀՀ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. դեկտեմբերի 20-ը, նկատի ունենալով, որ ծառայությունների մատուցման առաջին պատվերի տրամադրման և ծառայության մատուցման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակասել լինել 31 աշխատանքային օրից, եթե Կատարողը չի համաձայնում ծառայության մատուցումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների ծառայությունների

		նույն օրը հեռարձակելու դեպքում տեքստը կտրամադրվի մինչև ժամը 12:00-ը՝ նախօրոք տեղեկացնելով այդ մասին կատարողին: Հայտարարությունները պետք է եթեր հեռարձակվեն ամեն օր՝ ժամը 10:00-ից 19:00-ի սահմաններում: Պատվիրատուի ներկայացուցիչների կողմից հայտարարությունների վերաբերյալ արված բոլոր դիտողությունները և առաջարկությունները ենթակա են կատարման կատարողի կողմից: Հայտարարությունները պետք է եթեր հեռարձակվեն հայերեն լեզվով:					մատուցումը իրականացվում են ըստ ծառայությունների տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցի:

* Մատուցված ծառայությունների համար վճարումները կկատարվեն յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո այդ ամսվա ընթացքում եթեր հեռարձակված հայտարարությունների (հոլովակների) կամ հաղորդումների վերաբերյալ կատարողի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, որը պետք է ներառի նաև ստորագրված և կնքված տեղեկանք՝ եթեր հեռարձակված հայտարարությունների կամ հաղորդումների հեռարձակումների տևողության, օրերի ու ժամերի վերաբերյալ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017051
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

---------- Կ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
Եղվարդի խճ. 1, Երևան, 0054, ՀՀ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500805598600
ՀՎՀՀ 00067992
Լիազոր անձ՝

---------- Կ. Մաթոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«5» մարտ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը		
1	64235180/1	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի վերաբերյալ հաղորդումների (հոլովակների) պատրաստում և հեռուստատեսությամբ եթեր հեռարձակում	369 960	739 930	1 109 890	1 479 850	1 849 810	2 220 180	2 590 150	2 960 110	3 330 070	4 070 000	4 070 000		
2	92211100/1	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի վերաբերյալ հայտարարությունների պատրաստում և ռադիոյով եթեր հեռարձակում	557 270	928 780	1 299 870	1 671 380	2 042 900	2 414 410	2 785 930	3 157 010	3 528 520	4 290 000	4 290 000		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017051
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

_____ Կ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
Եղվարդի խճ. 1, Երևան, 0054, ՀՀ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500805598600
ՀՎՀՀ 00067992
Լիազոր անձ՝

_____ Կ. Մաթոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 5 » մարտ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 5 » մարտ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն